



## **Առաջարկությունների փաթեթ**

*«Տնտեսական մրցակցության  
պաշտպանության մասին»  
օրենքում փոփոխություն  
կատարելու մասին*

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒԴԹ)

### «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ինչպես հայտնի է, տնտեսական առաջընթացի շարժիչ ուժը տնտեսական մրցակցությունն է: Տնտեսական մրցակցության պաշտպանությունը ամեն մի պետության կարևորագույն գործառույթներից է՝ կոչված նպաստելու երկրի տնտեսության զարգացմանը, քաղաքակիրթ շուկայի ձևավորմանը, բարեխիղճ մրցակցության ապահովմանն ու սպառողների շահերի պաշտպանությանը: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական համակարգը ՀՀ-ում ունի համեմատաբար կարճ պատմություն: Ըստ էության՝ այս ուղղությամբ առաջին քայլը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումն էր 2000 թ. նոյեմբերի 6-ին, որն ըստ փորձագետների ավելի շատ հիշեցնում է հետպատերազմյան մրցակցային օրենսդրության գերմանական տարբերակը:

Նախարդ տարի Հայաստանի Տնտեսական մրցակցության Պաշտպանության Պետական Հանձնաժողովը (ՏՄՊՊՀ) կառավարությանն է ներկայացրել Տնտեսական Մրցակցության Պաշտպանության նոր օրենքի նախագիծ, որը կառավարությունն արդեն ուղարկել է Ազգային Ժողով: Ըստ մեզ օրենքի նախագիծը քննարկման է դրվել պատերազմի և համավարակի ամենաթեժ շրջանում և բնական է, որ շահագրգիռ կողմերից շատերը չեն մասնակցել քննարկումներին հասկանալի պատճառներով: Օրենքն առաջին ընթերցմամբ արդեն իսկ ընդունվել ԱԺ-ում: Սույն թվականի ***փետրվարի 2-ին***, առաջին անգամ ՏՄՊՊՀ-ն օրենքի նախագիծը ուղարկել է Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատ, խնդրելով ***113 էջանոց*** նախագծի մասին կարծիք տալ մինչև ***փետրվարի 5-ը***: Բնականաբար, նման ծավալի ու նման կարևորության փաստաթղթի մասին կարծիքներ հայտնելու համար տրված ժամանակահատվածը չափազանց քիչ էր:

Այնուամենայնիվ հաշվի առնելով Օրենքի կարևորությունը բիզնեսի կայուն աճի համատեքստում, ինչպես նաև գործարար համայնքի աճող անհանգստությունը նախագծի բազմաթիվ կետերի հետ կապված, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատն, իրականացրած վերլուծությունների ու քննարկումների արդյունքում

(որքանով որ թույլ է տվել սուղ ժամանակահատվածը) մշակել է փաստաթուղթ, որտեղ տեղ են գտել մի շարք առաջարկություններ ու դիտողություններ: Ստորև կներկայացնենք այն հիմնական դրույթները, որոնք ըստ մեզ ամենախնդրահարույցներն են սույն օրենքի համատեքստում:

Օրենքի նախագծի առանձին հոդվածների հետ կապված, ստորև ներկայացնում ենք հետևյալ դիտողությունները և առաջարկությունները՝

1. Օրենքի 4-րդ գլխի 7-րդ հոդածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանվում է, որ՝ ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը: Եթե պատկերացնենք, որ մի ինչ-որ շուկայում կան 3 «խաղացողներ», որտեղ նրանցից մեկն ունի 46% իսկ մյուս երկուսը 10 ալկան տոկոս մասնաբաժին (վերջին երկուսը ամենայն հավանականությամբ ՓՄՁ-ներ են) ապա ըստ օրենքի վերջին երկուսը նույնպես պետք է համարվեն գերիշխող դիրք ունեցող, այնինչ նրանց մասնաբաժինը շուկայում դժվար թե հնարավորություն տա որևէ պարագայում գերիշխող դիրք ունենալ: Ուստի առաջարկում ենք վերաձևակերպել սույն կետը, սահմանելով ավելի ընդունելի մասնաբաժիններ և/կամ չպայմանավորել փոքր «խաղացողների» գերիշխող դիրք ունենալը խոշոր «խաղացողի» մասնաբաժնի հետ :
2. Օրենքի 4-րդ գլխի 7-րդ հոդածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանվում է, որ տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի, այդ թվում՝ շուկայական իշխանության որոշման կարգը և չափանիշները սահմանում է Հանձնաժողովը: Ըստ մեզ նշված կարգը և չափանիշները պետք է հաստատվեն վերադաս պետական մարմնի կողմից, ինչն անհրաժեշտ է ամրագրել օրենքով:

3. 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է, որ Գերիշխող դիրքի չարաշահում է համարվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը կամ գործարար շրջանառության սովորույթներին հակասող պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը կամ կիրառումը, որի հետևանքով ստեղծվում են կամ կարող են ստեղծվել խտրական պայմաններ: Ըստ մեզ **գործարար շրջանառության սովորույթներին հակասող պայմաններ** արտահայտությունը շատ ընդհանրական է և կարող է բազմաթիվ սուբյեկտիվ մեկնաբանությունների տեղիք տալ՝ առաջացնելով թյուրըմբռումներ: Ուստի առաջարկում ենք հստակեցնել կամ հանել այս մասը:
4. 9-րդ հոդվածը սահմանում է չհիմնավորված բարձր գին հասկացությունը: Ըստ հոդվածի կազմակերպությունները պետք է իրենց ապրանքի գինը հիմնավորեն ըստ տվյալ արտադրանքի ինքնարժեքի: Այն դեպքում, երբ չկան շուկա մուտք գործելու արգելքներ և շուկան ըստ էության ազատ մրցակցային է, գնի հիմնավորման «ինքնարժեքային» մոդելն արդարացված չէ: Ազատ մրցակցության պայմաններում բիզնեսն ազատ պետք է լինի իր սեփականությունը հանդիսացող արտադրանքի/ծառայության համար սահմանել սեփական գինը: Ուստի առաջարկում ենք վերաձևակերպել **չհիմնավորված բարձր գին հասկացության իմաստը՝ սահմանելով գնի հիմնավորման այլ մեխանիզմներ:**
5. 12-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք **ավելասցնել լրացուցիչ կետ հետևյալ բովանդակությամբ՝** «բանակցային ուժեղ դիրքի չարաշահում է համարվում՝ Պայմանագրային կետերի ներառյալ վճարումների իրականացման պարտավորությունների պարբերաբար խախտումները»: Սույն կետի անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քիչ չեն դեպքերը երբ մի շարք խոշոր առևտրային ցանցերը հաճախակի ուշացնում են վճարումները անորոշ ժամկետով: Բացի այդ նշված ոլորտում պայմանագրայինն հարաբերությունները

կարգավորելու համար անհրաժեշտ կլինի նաև փոփոխություններ և լրացումներ կատարել առևտրի և ծառայությունների մասին օրենքում:

6. 93-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ 4-րդ և 6-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար սահմանվում է ընկերության նախորդ տարվա հասույթի մինչև 10%-ի չափով տուգանք:

Ինչպես հայտնի է վերջին տարիներին տնտեսական օրենսդրության մշակուման հիմքում դրվում է նաև կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու մոտեցումը՝ օրինակ հստակեցնելով սանկցիաների չափերը: Նշված կետը սակայն դուրս է այդ տրամաբանությունից, քանի որ մինչև 10% (0-ից 10 %) ձևակերպումը հստակ չէ: Ուստի առաջարկում ենք հստակություն մտցնել օրենքի նախագծի սույն կետում, այդ թվում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով և/կամ տուգանք սահմանել ոչ թե նախորդ տարվա հասույթի այլ խախտման չափի վրա:

7. Օրենքի նախագծի 90-րդ և 101-րդ հոդվածները նախատեսում են իրավախախտման վերաբերյալ ընդունվող որոշումների և դրանց կատարման մասին դրույթներ: Հատկանշական է, որ ՏՄՊՊՀ-ին իրավունք է վերապահված արգելանք դնել կազմակերպության գույքի և հաշիվների վրա առանց դատարանի որոշման և Հարկադիր Կատարողը պարտավոր է դա ապահովել: Իրականում այս դրույթն ամբողջովին հակասում է անմեղության կանխավարկածի և դատական պաշտպանության իրավունքի սահմանադրությամբ ամրագրված իրավունքները: Այս համատեքստում առաջարկում ենք վերաձևակերպել վերոնշյալ հոդվածի բովանդակությունը այնպես, որ ՏՄՊՊ հանձնաժողովի արգելանքի և դրամական պահանջները կատարման ենթակա դառնան բացառապես անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա:

### Ընդհանուր նկատառումներ

- ✓ Առաջին և ամենակարևոր նկատառումը օրենքի նախագծի **ոչ պատշաճ քննարկումն է**: Նման օրենքի նախագիծը, որն ըստ էության գործարար

միջավայրը կարգավորող կարևորագույն օրենքներից մեկը պիտք է լինի, պահանջում է լայն հանրային քննարկում:

- ✓ Առհասարակ նման կարևոր օրենքներ ընդունելուց առաջ միջազգային փորձի խորը և համապարփակ ուսումնասիրությունը չափազանց կարևոր է գործուն օրենք ստանալու համար, որտեղ հստակ նշված կլինեն հակակշիռների և զսպումների մեխանիզմները և երկվորյա տեղիք չեն տա: Մինչդեռ սույն օրենքի նախագծի համատեքստում, մի շարք դրույթներ տարբեր դիտանկյուններից մեկնաբանվելու արդյունքում կարող են տրամագծորեն հակառակ եզրակացությունների հանգեցնել: Սովորաբար տնտեսական օրենսդրություն մշակելիս միջազգային փորձի ուսումնասիրությունը և դրանց տեղայնացման հնարավորությունների բացահայտումը տարածված պրակտիկա է համարվում: Առհասարակ տեղեկություններ այն մասին , որ սույն օրենքի նախագիծը մշակելիս հաշվի են առնվել նաև միջազգային փորձագետների (օրինակ WTO, UNCTAD, OECD և այլն) կարծիքները և եզրակացությունները նախագծի մշակման որևէ փուլում, չկան: Այնուամենայնիվ, եթե կան նման փորձագիտական եզրակացություններ, առաջարկում ենք նույնպես քննարման առարկա դարձնել նախագծի դրույթների հիմանավորման նպատակով:

- ✓ Դիտարկելով օրենքի նախագծի ամբողջական բովանդակությունը, այն ավելի շատ ունի **կաշկանդող և սահմանափակող բնույթ, ազատ մրցակցությունը պաշտպանելու և խթանելու փոխարեն:** Նշված դրույթը առավել կարևորում ենք ներկայիս հետպատերազմական և համաճարակային ճգնաժամի համատեքստում:

*Ամփոփելով վերոգրյալը, ՀՀ ԱԱՊ-ն դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը ներկայիս պայմաններում: ՀՀ առևտրաարդյունաբերական պալտը պատրաստ է լայն քննարկումներ կազմակերպել ողջամիտ ժամկետներում:*